

որ մեր սերունդքն հանգչին անոր շուքին տակ և մենք հոգևով լսենք անոնց սիրալիր մորմուքը :

Ծառն է վերջապէս շատ աւելի դիմացկուն արձան մը :

Դալարի-գլխոյ հրուանդանին պոսպապներն և Գալիֆոունիոյ վէլլինկոունիաներն կը յիշեցընեն մեզի ստեղծագործութեան առաջին դարերը :

Լիբանանու մայրերն , և Բանդի կոմսութեան մէջ Ֆորդինկէլի և Պրէպրունի գեղձիներն և Սէյլան կղզոյն մէջի Անաճարուրի կրօնական քղեկին ժամանակակից են սուրբ գրոց :

Եթէ աւանդութեան հաւատանք դեռ կանգուն կան այն ձիթենիներն՝ որոց ներքե Յիսուս հանգչեցաւ :

Բոմբրէի մէջի Տրոշիտաց կաղնին , Ֆոնդէնըպլոյի անտառին մէջի Մեճն-Կարոյուսի և Կլոյիսի կաղնիներն փրանկաց և Կեղտաց ժամանակներուն կը տանին մտքերնիս :

Ճարոնի մէջ Նինոպայի հռչակաւոր քափուրենին առաջ եկած է Գոպոտոզայի փիլիսոփային (որ Ը դարուն կ'ապրէր) մէկ գետին խոթած գաւազանէն :

Իվրդոյի մօտ Ալլուիլիլի կաղնի-մատուռն՝ բուսած է 1000 թուականին միջոց ծլած կաղինէ մը :

Օլիվիէ Գրոմվիլի հին պալատին քովի Կոֆի կաղնին 1066ն տնկած է Թէոդոր Կոտֆրէ , որ յԱնգղիա գնաց Յաղթող Գուլիէլմի հետ :

Երկայն ատեն զարմացման նիւթ մը եղած էր վէնսան անտառին մէջի այն կաղնին՝ որուն ներքե Ս . Լուդովիկոս դատաստան կտրեր էր :

Քիչ ժամանակ առաջ դեռ կար Հռոմմայ Ս . Սաբինայ վանքին մէջ , Ս . Դոմինիկոսի 1200ն տնկած մէկ նարնջենին . և ուրիշ մը Ֆոնտի մենաստանին մէջ , զոր Ս . Թովմաս Ագուլինացին տընկեր էր 1278ն :

Յարդ պահուած է վէրսայլի մէջ Մեճն-Պոշրայուն ըսուած նարնջենին զոր 1411ն Յովհաննա Ալբրետի հանիներէն մէկն տնկած էր :

Կրիզոններուն մէջի Դրոնսի յօռին

(օխլամուր) , որ 1424ն 'ի վեր հռչակուած է՝ 1798ն 51 ոտք շրջապատ ունէր , ուստի կ'իմացուէր որ 600 տարեկանէ աւելի պիտի ըլլար :

Ֆրիպուրկ պանծանք կը ցուցընէ 'ի յիշատակ Մորայի պատերազմին 1476ն տնկուած յօռի ծառը :

Գոնդրեքսիլ լուացուելու գնացողներն կ'երթան տեսնելու Սէնթ-Ուան անտառին մէջի Բարթիլդան անուանի կաղնին , որուն տակ կը ժողուէին Լուսնեղբ և կ'արշաւէին անտառներուն մէջէն Գաղղիոյ սահմանի գեղերը կողոպտելու :

Սիշլիի անուամբ ճանչցուած դարական ծառերն , որ ցարդ կը հովանաւորեն ճամբաները , հասարակաց տեղերը , եկեղեցիներուն գաւիթները , վկայ են Հենրիկոս Դի պաշտօնէին՝ անտառատածութեան վրայ ըրած ազդեցութեանը :

Սիւլլի հին Պարսից մոգերուն պէս կ'ըսէր , թէ զաւակ մը ունենալը , դաշտ մը մշակելը , ծառ մը տնկելը՝ երեք մեծ աստուածահաճոյ գործքեր են :

Եբրայական քանգարան .

Պ . Սօլսի՝ Գաղղիոյ ծերակուտի և ուսումնարանի անդամոց մէկն՝ Պաղեստին և Արաբիա ըրած ճամբորդութիւններէն դառնալով մօտեցաւ , շատ հետաքրքրական լուրեր բերաւ . որոց զըլխաւորն է Սողոմոնի տաճարին մէջի քննութիւնը , ուր ինչուան հիմայ միայն քանի մը ճամբորդներ դադտուկ գացեր էին . բայց ինքը սանդուխներ զնել տալով , քանդակներուն օրինակը հանեց , ամենայն զգուշութեամբ օրինակեց սողոմոնեան ճարտարապետութեան անգին մնացորդները , որչափ որ Տիտոսի երուսաղէմ առած ժամանակ տաճարին հրկիզութենէն ազատած էին :

Բայց իր աշխատութեանց մէջ ամենէն աւելի հետաքրքրականն է՝ քաղա-

շորաց գերեզմանատուներ փորել մար-
րելը . գտաւ այն քաւութեան արձանը՝
զոր Հերովդէս կանգնեւ էր այն գերեզ-
մաններուն մէջ, վասն զի պղծեւ էր զա-
նոնք մէջի գանձերը առնելու համար :
Բարեբախտաբար գտաւ նաև մեռելոց
սենեակ մը շատ արհեստով շինած, ու
րուն մէջ հին գերեզման մը կար : Այս
մարմարէ գերեզմանիս մէջի դիակը՝ ար-
տաքին օղը տեսածին պէս՝ փոշի դար-
ձաւ : Այս գերեզմանս մէկ հատիկ իր
տեսակին մէջ, և որուն նման Եւրոպայի
թանգարանաց մէջ չկայ՝ ի Լուվր բե-
րուեցաւ ուրիշ հնութիւններով . և ա-
սոնք ամենը մէկտեղ երբայական թան-
գարան մը պիտի ձևացուին :

Այս գերեզմանիս վրայ գրուածք մը
կար, զոր կարդաց Տէր Պարթէ՝ Սորպո-
նի մէջ երբայական լեզուի վարժա-
պետն . և կ'ըսէ՝ վրան կարճ գրուածք
մը կայ երկու լեզուով՝ երկու տող, և
ամեն մէկ տողը երկերկու բառով, և այս
բառերէս մէկը երեք գրով է, և միւսը
հինգ . առաջին տողին վրայ գրած է հին
ասորի լեզուով, ՍԻՏՈՆ ՄԱԼԻԵԹՕ, այս
ինքն Սիդոն քաղաքի . երկրորդին վրայ
քաղաքական գրերով, ՍԻՏՈՆ ՄԱԼԻԵ-
ԴԱ, որ նոյն առջի բառերուն թարգմա-
նութիւնն է :

Հրէից պատմութեան մէջ չիշուիր
Սիդոն անունով թագուհի, և թէ որ
այս դամբանիս թուականը ստուգելու
ուրիշ կերպ մը չըլլար, տարակուսա-
կան և անստոյգ բան մը կ'ըլլար . բայց
դիտելով գրերուն ձևը, գերեզմանին ե-
րևոյթը և վրայի քանդակեալ զարդե-
րը, յայտնի կ'ըլլայ որ քրիստոնէութե-
նէ առաջ չէ, և կարելի է որ Կղզիոսի
և Ներոնի ժամանակակից ըլլայ . հնա-
դիտաց թողունք անոր թուականը գըտ-
նել և յայտնի տեղեկութիւն մը տալ
վրան :

Հարկաւոր անդրադարձոքիւն մը .

Սունկը սիրողներուն համար պատ-
շաճ կը սեպենք Գաղղիացի բժշկի մը
դիտողութիւնն ու խորհուրդը համառօ-
տիւ ծանուցանելու :

« Այլ և այլ օրագիրներ, կ'ըսէ, այս
կերպը կը սորվեցնեն սունկին փնասա-
կարութիւնը ճանչնալու համար : Եռա-
ցած ջրի մէջ սունկը կը լեցնեն, ու յե-
տոյ ջրին մէջ արծըթէ դրգալ մը կը խո-
թեն . թէ որ դրգալը սև գոյն մը առ-
նու, ըսել է որ սունկերը թունաւոր են :

Այս կերպը դժբաղդաբար խիստ ընդ-
հանուր եղած ըլլալով, շատ անգամ
թունաւորութիւններ եղեր են . ես կրնամ
որոշակի հաստատել կ'ըսէ, որ թունա-
ւոր սունկերը եփուելով ոչ երբէք արծը-
թին ու ոսկիին փայլունութիւնը կ'այ-
լայլեն » :

Այս բանս՝ բժիշկը իրեն փորձերուն
վրայ վստահացած կը զուրցէ, համե-
լով առանձին առանձին բոլոր նոյն թու-
նաւոր սունկի տեսակները՝ որոնց վրայ
փորձն ընելով, տեսեր է որ արծըթին
գոյնը չեն այլայլեր :

Բայց թէ ինչո՞ւ համար արծաթը,
այսպիսի փորձի մը մէջ, երբեմն կը սև-
նայ և երբեմն ոչ, պատճառը չտար :

Անգղիոյ օրագրի մը մէջ ալ դիւրին
կերպ մը կը կարդանք ունկէ թունաւո-
րութիւնը դարման ընելու : Պէտք է, կ'ը-
սէ, զտած շաքարը՝ ջրի մէջ հալեցուցած՝
առատաբար խմցընել թունաւորութիւնը .
թէ որ այս դարմանը՝ փնասին առջևը
չկարենայ առնել, թունաւորութիւն մէկ
երակը բանալու է, կ'ըսէ, և մէջը նոյն
տեսակ ջրէն դնելու է . ասով թոյնը
չկրնար փնաս մը ընել :